

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վերապատրաստող կազմակերպություն

**ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ, Աբրահամյանի անվան ավագ դպրոց»
ՊՈԱԿ**

ԴԱՍԸՆԹԱՑ՝ Հերթակ ան ատեստավորման ե նթակա
ուսուցիչների վերապատրաստում

ԹԵՄԱ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ Ը
ՀԱՄԱԳՈՐԾԱՔՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄԱՆՈՒԴՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ

ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբուբյան

ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻ՝ Մարգարիտ Հակոբյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենաի Էդ. Պողոսյանի
անվան
թիվ 2 հիմնական դպրոց

Վարդենիս 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	5
ՓԱՍՏԵՐ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	16
ԴԱՍԱԴԼԱՆ 1	17
ԴԱՍԱԴԼԱՆ 2	20
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ	22

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական պրակտիկայում հաճախ կիրառվում է գործնական մեթոդը (վարժություններ, գործնական աշխատանք, լաբորատոր աշխատանք, ճանաչողական խաղեր): Լաբորատոր աշխատանքը զարգացնում է սովորողների տրամաբանական մտածողությունը և գործնական հմտությունները: Բարեխիղճ, սրտացավ, իսկական ուսուցիչը մտահոգվում է ոչ միայն ծրագրային նյութը խորապես ուսուցանելու, այլև աշակերտների սովորածի, յուրացրածի համար ճիշտ գնահատակ նշանակելու հարցով: Այս առումով կարևորում են լաբորատոր աշխատանքների կազմակերպումը և գնահատումը: Լաբորատոր աշխատանքները սովորաբար կատարվում են յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունից և ամփոփումից հետո: Ցավոք, ոչ բոլոր դպրոցներում կան անհրաժեշտ քանակի ու որակի սարքավորումներ, և աշակերտները մի քանի խմբերով չեն կարողանում կատարել պահանջվող փորձերը, գործնական աշխատանքները: Ուստի, որպեսզի լաբորատոր աշխատանքները կազմակերպվեն արդյունավետ և ծառայեն իրենց նպատակին, թեման ուսուցանելուց և ամփոփելուց հետո լաբորատոր աշխատանքը չենք կատարում: Ուսումնասիրում ենք ևս երկու-երեք թեմա, դրանք ամփոփում, հետո միայն չկատարված երկու-երեք լաբորատոր աշխատանքները կատարում ենք միասին:

Գործնական աշխատանքները դպրացականների համար բարդ գործընթաց է որի ճիշտ կազմակերպումը մանակավարժի կողմից չի հանգեցնի խնդիրների:

Ենթադրվում է, որ մեր կողմից առաջադրված գործնական աշխատանքների կատարմանը նպաստող մանկավարժական աշխատանքների միջոցով դպրոցականները կհասնեն ճիշտ արդյունքի: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գործնական աշխատանքի ազդեցությունը սովորողների գիտելիքների յուրացման վրա:

Ջետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Մշակել հատուկ միջոցներ և պայմաններ, որոնք կնպաստեն գործնական աշխատանքների կատարմանը ու զարգացմանը, և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:
- Ուսումնասիրել և վերլուծել հատուկ գիտամեթոդական գրականությունում և գործնականում առկա հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից մո-տեցումները, լուսաբանվածությունը:
- Ծանոթանալ ուսումնական հաստատություններում գործնական աշխատանքների կատարման ճիշտ մեթոդիկային:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գործնական աշխատանքների արդյունավետությունը թեմայի յուրացման վրա

Կենսաբանության առանձնահատուկ դերը մարդկության զարգացման ու ժամանակակից քաղաքակրթության ձևավորման գործում շատ կարևոր է: Տեղեկատվական ու հաշվիչ տեխնոլոգիաների զարգացումը, տարածության և ժամանակի լավ ըմբռնումը, բնության մեջ գոյություն ունեցող բազում օրինաչափությունների հայտնաբերումն ու նկարագրումը ցայտուն կերպով ընդգծում են կենսաբանության գիտական և մշակութային արժեքը: Եվ որ ամենակարևորն է, կենսաբանությունը նպաստում է մարդու ճանաչողականությունը բնությանը և կենդանի օրգանիզմներին:

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Աշակերտին պետք է հասկանալի դարձնել մաթեմատիկական տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:

Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների

ձևավորմանն ու զարգացմանը: Յենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս:

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու ավանդական միջոց են (ևսև գործնական աշխատանքի տեսակ) էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացումը, պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (իրերի և նրանց մոդելների պատրաստում, կենցաղային իրավիճակներում հաշվարկների կատարում, բնական որևէ երևույթի դիտում ու մեկնաբանում և այլն): Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Էքսկուրսիան ուսուցման պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարըս- տացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը, ճանաչողական մեծ նշանակություն ունի էքսկուրսիան, որին դասը, լաբորատոր ու գործնական ւղարապմ ունքները, իրենց կրթական մեծ նշանակությամբ հանդերձ, փոխարինել չեն կարող:

Էքսկուրսիայի ընթացքում անմիջական կապ է ստեղծվում շրջապատի մ իջավայրի հետ, հնարավոր պայմաններ են առաջանում ավելի մոտիկից ու խոր ճանաչելու աշակերտին, նրա բնավորությունը, հակումները, հմտությունները, հոգեբանությունը: Կենսաբանությունն ուսումնասիրելիս նպատակահարմար է աշկերտներին էքսկուրսիա տանել երկրաբանական թանգարան, որտեղ կան տարբեր դարաշրջանների բրածո օրգանիզմների քանդակներ, դրոշմվածքներ, վերակերտած կմախքներ: Ընթացիկ էքսկուրսիաների համար լավագույն վայրեր են գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում եղած ցուցահանդեսները կամ թանգարանները:

Էքսկուրսիաների տարբեր տիպերը հնարավորություն են տալիս ուսուցանվող թեմայի տեսականը զուգակցել գործնականին, անցած նյութն ավելի խոր ու բազմակողմ անի մատուցել աշակերտներին: Նիստ անհրաժեշտ է ժամանակին կազմակերպել ծրագրով նախատեսված էքսկուրսիաները:

Էքսկուրսիայի կազմակերպումն ու անցկացումը կազմված են հետևյալ տողերից.

- նախապատրաստում,
- կազմակերպում,
- ամփոփում,

Էքսկուրսիային նախապատրաստվում են ինչպես ուսուցիչը այնպես էլ աշակերտները: Ուսուցիչը նախ որոշում է, թե էքսկուրսիան ինչ հարցի շուրջ է և որտե՞ղ պետք է կազմակերպվի, ինչ նպատակ պիտի հետապնդի, ի՞նչ պարագաներ են անհրաժեշտ, որքան ժամանակ է պետք :

Գործնական աշխատանքներում դրված փորձերի նպատակն է ամրապնդել տեսական նյութը, զարգացնել աշակերտների աշխատանքային ունակություններն ու հմտությունները: Որպեսզի գործնական պարապմունքները հաջող անցնեն, անհրաժեշտ է, որ ուսուցիչը առաջին հերթին կազմի փորձի պլանը, ապա՝ անձամբ կատարի փորձը, ստուգի փորձի արդյունքները: Նման նախապատրաստական աշխատանքի նպատակն է նախօրոք վերացնել փորձի հետ առնչվող թերությունները:

Ուսուցիչն ուսումնական տարվա ընթացքում լաբորատոր-գործնական աշխատանքներ կազմակերպելիս ղեկավարվում է պետական ծրագրով և այն նախատեսում է իր թեմատիկ պլանները կազմելիս: Նա նախօրոք ձեռք է բերում գործնական պարապմունքների համար անհրաժեշտ նյութեր, սարքավորումներ:

Տարբերում ենք գործնական աշխատանքների հետևյալ տեսակները՝

- Բնության առարկաների ճանաչման և որոշման աշխատանքներ,
- Դիտումներ և դիտված երևույթների հետագա գրանցում.
- Փորձի կատարում, փորձում առաջադրված հարցի որոշում, ճանաչում և որոշում:
- Կենդանի նյութի կամ օրգանիզմի ճանաչում:

Անհրաժեշտ է այստեղ տարբերել, որ ցուցադրական մեթոդի ժամանակ աշակերտները դիտում են ուսուցչի կողմից ցուցադրվող աղյուսակները, փորձերը, պարապմունքների մամանակ աշակերտներն անձամբ են կենդանի կամ մահացած

օբյեկտների դիտումն հաշվումներ և նույնիսկ օբյեկտների ձևավորում: Այսպիսի աշխատանքի արդյունքը լինում է այն, որ աշակերտները լրիվ պատկերացում են ունենում իրենց դիտած օբյեկտի մասին:



ՓԱՍՏԵՐ ԵՎ ԲԱՏԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ

Գործնական աշխատանքների տիպի դասի թեմատիկան բավականին հարուստ է 7-րդ և 8-րդ դասարանի կենսաաբանության գրքերում: Այս դասընթացից գործնական աշխատանքներն իրականացվում են լաբորատոր աշխատանքների միջոցով: Բարձր դասարաններում գործնական դասերն անց են կացվում վիճակագրական տվյալներով, որոնք վերաբերելու են բնակչությանը և նրա տնտեսական գործունեությանը: Ցանկացած գործնական աշխատանքների դասի կազմակերպման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե աշակերտները նախորդ դասընթացներից և թեմաներից այդ աշխատանքներին վերաբերող նյութերը և առաջադրանքները որքանով են յուրացրել և որքանով են պատրաստ գործնական աշխատանքը կատարելու համար:

Գործնական կամ լաբորատոր աշխատանքների ժամանակ դասարանը բաժանում են մի քանի խմբերի(ելնելով սարքավորումների քանակից), այնուհետև յուրաքանչյուր խումբը կատարում է իրեն հանձնարարված լաբորատոր աշխատանքը, ինչից հետո հանձնարարում են՝ գրել հաշվետվություն: Ավարտելուց հետո լրացուցիչ մեկ դասաժամ հատկացնում են ընդհանուր գործնական աշխատանքների ամփոփմանը և սովորողների գնահատմանը: Այս ձևով աշակերտների յուրացումն ու վերլուծելու կարողություններն առավել տեսանելի են լինում, և գնահատականներն առավել հիմնավորված, պատճառաբանված:



Գարնանային եզրափակիչ էքսկուրսիաների ժամանակ դպրոցականները ուսումնասիրում են բնության գարնանային երևույթները, բուսական և կենդանական ծագում ունեցող ցուցանմուշներ են հավաքում ձմեռվա ամիսներին անցած նյութը կրկնելու և խորացնելու նպատակով.

Գործնական աշխատանքների դեպքում դասապրոցեսը պետք է բաղկացած լինի հետևյալ օղակներից.

1. **Կազմակերպչական մաս** — Դասի հենց սկզբից ուսուցիչն աշակերտների առջև դնում է որոշակի խնդիր կամ խնդիրներ: Դասարանը բաժանում է խմբերի, յուրաքանչյուր խմբին հանձնարարում է մեկական խնդիր:

2. **Ուսումնասիրման պլանի կազմում** — Աշակերտները ուսուցչի մասնակցությամբ կազմում են հանձնարարված աշխատանքի իրականացման պլան: Եթե ուսուցիչը առաջին անգամ է հանձնարարում այդպիսի աշխատանք, պարտավոր է մանրամասն ներկայացնել պլանը, որոշ հարցերի վերաբերյալ տալ բացատրություն կամ պարզաբանում:

Դասի կահավորման համար դասարան բերվում են մանրադիտակներ, պաստառներ և այլն:



Ուսուցիչը հիշեցնում է, որ աշակերտները կարող են ազատ օգտվել և տվյալներ բերել նաև դասագրքի համապատասխան դասանյութից: Այնուհետև աշակերտները շարադրում են հանձնարարությունը պլանին համապատասխան:

1 .Թեճալի ամփոփում .
2 .Գործնական աշխատանք



Առանձնացրու՝ պարզ և բարդ տերևները: Մի քանի պարզ և բարդ տերևի օրինակ էլ գտիր քո այգուց, նկարիր և տեղադրիր բլոգումդ:
Պարզ- 1, 3, 5, 8, 9, 11, 13, 14, 15, 16, 18
բարդ- 2, 4, 6, 10, 12, 17

Միաշաքիլավոր և երկշաքիլավոր բույսեր

	Ծաղկի մասերի թիվը յուրաքանչյուր օղակում երեքի բազմապատիկն է:		Ծաղկի մասերի թիվը յուրաքանչյուր օղակում 5-ի կամ 4-ի բազմապատիկն է:
	Տերևները ամբողջաձև են, աղեղնաջիղ կամ զուգահեռաջիղ:		Տերևները փետրաջիղ կամ մատնաջիղ են:

Գործնական աշխատանքի կատարման ճշտությունը, հաջորդական շարադրանքը ստուգելու նպատակով ուսուցիչը հավաքում է կատարված աշխատանքները՝ տանը ստուգելու և գնահատելու համար:

Կենսաբանության ուսուցումն ունի իր առանձնահատկությունները, քանի որ դասի ընթացքում պահանջվում է բնական առարկաների ցուցադրում . լաբորատոր փորձերի կատարում, օպտիկական միջոցների կիրառում: Դրանք հաջող և արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ կաբինետը լինի լուսավոր: Անհրաժեշտ լուսավորվածությունը, հարմար կահույքը, մաքրությունը, թթվածնով հարուստ օդը և շենքի նորմալ ջերմաստիճանը բարենպաստ պայմաններ են ստեղծում ուսուցման պրոցեսի արդյունավետությունն ապահովելու համար:

ՄՈՂԻՖԻԿԱՏԻՈՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՕՐԻՆԱԿՈՎ:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ մոդիֆիկացիոն փոփոխականության վիճակագրության օրինաչափությունները:

Աշխատանքի ընթացքը.

1 Չափում ենք դասարանի աշակերտների հասակը.

2.Դասավորում ենք դրանք մի շարքում, ըստ հատկանիշի ^ս

3.Ստացած տվյալների հիման վրա կառուցում ենք վարիացիոն շարք և լրացնում աղյուսակը

հատկանիշը (աշակերտների հասակը, սմ)								
հատկանիշը հանդիպմն հաճախականությունը								

4.Վարիացիոն շարքի հիման վրա կառուցում ենք վարիացիոն կոր, արցիսների առանցքի վրա տեղադրելով հատկանիշը (աշակերտների հասակը, սմ), իսկ օրդինատների առանցքի վրա՝ յուրաքանչյուր տարբերակի հանդիպման հաճախականությունը:

5 Հաշվել այդ շարքի միջին մեծությունը:

3. Մարդու Գենետիկայի Ուսումնասիրման տոհմաբանական մեթոդը

Աշխատանքի նպատակը: Ծանոթանալ մարդու գենետիկայի ուսումնասռությանը:

Աշխատանքի ընթացքը: Ընտրել հատկանիշ կամ հիվանդություն, օրինակ աչիկություն և ձախիկություն. շագանակագույն և երկնագույն աչքեր, կարճատեսություն և նորմալ տեսողություն և այլն:

Լաբորատոր աշխատանք

Կորիզավոր բջիջների կառուցվածքի դիտումը մանրապատրաստուկում

Նպատակը. Աշակերտներին ծանոթացնել | մանրապատրաստուկ ստանալու մեթոդին, տարբեր օրգանիզմների բջիջների կառուցվածքի առանձնահատկություններին և համեմատել: Արդյունքում հիմնավորել կենդանի օրգանիզմների կազմավորման միասնականությունը (րնդհանրությունը):



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կենսաբանության բոլոր դասընթացների համար **գործնական մեթոդը** կիրառվում է զանազան վարժություններ և փորձեր կատարելու ժամանակ, որի հիմնական նպատակն է ձևավորել կարողություններ և հմտություններ տեսական գիտելիքները կյանքում նպատակասլաց կիրառելու համար:

Գործնական աշխատանքները նպաստում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացմանն ու ամրապնդմանը:

Գործնական աշխատանքները կենսաբանության և առհասարակ բոլոր բնագիտական առարկաների կարևորագույն բաղադրիչ մաս են կազմում, քանզի աշակերտներին հնարավորություն են տալիս, արդեն միջին դասարաններից սկսած պատկերացում կազմել բնության, նրանում կատարվող երևույթների վերաբերյալ, ինչն էլ սովորողներին պարտավորեցնում է ուշադիր լինել և խնամքով վերաբերվել բնության տարրերին:

Ուսուցման յուրաքանչյուր մեթոդ նպատակաուղղված է ինչպես սովորողի գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը, այնպես էլ նրա դաստիարակությանը՝ արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորմանը:

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Մարգարիտ Զակոբյան

Առարկա՝	Կենսաբանություն	Ամսաթիվ	11.07.2022	Կիսամյակ	2	Դասարան	IX
Թեմա	Մոդիֆիկացիոն վիճակագրության ուսումնասիրում						
Օգտագործող նյութեր՝	IX դասարանի կենսաբանության դասագիրք, տետրեր, մարկերներ, նկարներ կաչուկ թղթեր, գրատախտակ:						
Դասի նպատակը՝	Գործնական աշխատանքի նպատակն է ցույց տալ մոդիֆիկացիոն փոփոխականության վիճակագրության օրինաչափությունները: ● Ձևավորել վիճակագրական կոր կառուցելու հմտություններ						
	Ուսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքներ	● Աշակերտները կկարողանան հաշվել հատկանիշների հանդիպման հաճախականությանը, ինչպես նաև կկարողանան ըստ այդ հաշվարկի կառուցել վարիացիոն կոր:						
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	● Զամագործակցային աշխատանքին միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում						
Նպատակների հասնելու ռազմավարություն	Նախատեսում է խմբային աշխատանք՝ արձանագրել թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան						
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Զարգադրում	Կիրառվող մեթոդ(ներ)			
5 րոպե	1. Բացել դասագրքերը, կրկնել դասը, ներկայացնել տնային աշխատանքները:	1.ա) Ողջունել դասարանին, բ) Կատարել հաճախումների ստուգում գ) Ստուգել տնային աշխատանքները, դ) Բացատրել նախորդ դասի անհասկանալի հարցերը	Անդրադարձ ● Ի՞նչ հասկացանք: ● Ի՞նչ սովորեցինք: ● Ի՞նչը կարևորեցինք:	1. Մտագրոհի մեթոդներ 2. Գործնական աշխատանք 3. Զամագործակցային մեթոդներ			
		2. Մտագրոհի մեթոդ հնարքի միջոցով պարզել թեմայի յուրացման աստիճանը					
		3. Յուրաքանչյուր խմբին հանձնարարել					

		<p>կոնկրետ խնդիր Խումբ I. Չափել դասարանի աշակերտների հասակը, հաշվել և կազմել վարիացիոն շարքը ըստ այդմ նաև վարացիոն կորը: Խումբ II. Կշռել դասարանի աշակերտների քաշը, հաշվել և կազմել վարիացիոն շարքը ըստ այդմ նաև վարացիոն կորը: Խումբ III. Չափել տրված տերևների երկարությունը կազմել հանդիպման հաճախականության վարիացիոն շարքը ըստ այդմ նաև վարացիոն կորը: Խումբ IV. Կշռել տրված լրբու սերմերը, հաշվել միջին կշռի հանդիպման հաճախականությունը, կազմել վարիացիոն շարքը և վարացիոն կորը:</p>		
		<p>4. Խմբային աշխատանքի ժամանակ ուսուցչուհին ուղղորդում և վերհսկում է խմբերի կատարվող աշխատանքներին, ինչպես նաև պատասխանում ընթացիկ առաջացած անհասկանալի հարցերին:</p>		
		<p>5. Խմբերի աշխատանքների վերլուծություն:</p>		
<p>5 թույլե</p>	<p>2. Լսում են ուսուցչին պատասխանում հնչեցված</p>			

	հարցերին, կատարում հրահանգները:			
15 թույլ	3.Խմբերում աշակերտները սկսեցին աշխատել նախապես կատարված հանձնարարությունները			
10 թույլ	4.Ավարտեցին աշխատանքը համագործակցելով միմյանց հետ քննարկեցին առաջադրանքը և ներկայացրեցին աշխատանքները			
5 թույլ	5.Չավաքում են աշխատանքները և հանձնում			
Տնային աշխատանք 3ր	Տնային առաջադրանքի հանձնարարում: 2 թույլ ցանկությամբ նմանատիպ մեկ աշխատանքի կատարում անհատական:			

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Մարգարիտ Զակոբյան

Առարկա՝	Կենսաբանություն	Ամսաթիվ	11.07.2022	Կիսամյակ	2	Դասարան	IX
Թեմա	Կորիզավոր և նախակորիզավորներ բջիջների կառուցվածքի դիտումը մանրադիտակով						
Օգտագործող նյութեր՝	IX դասարանի կենսաբանության դասագիրք, տետրեր, մարկերներ, նկարներ կաչու են թղթեր:						
Դասի նպատակը՝	Աշակերտներին ծանոթացնել մանրապատրաստուկ ստանալու մեթոդին, տարբեր օրգանիզմների բջիջների կառուցվածքի առանձնահատկություններին և համեմատել: Արդյունքում հիմնավորել կենդանի օրգանիզմների կազմավորման միասնությունը (ընդհանրությունը)						
	Ուսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none"> • Աշակերտները կկարողանան տիրապետել մանրապատրաստուկ պատրաստելու հմտություններին, ինչպես նաև կկարողանան համեմատել տարբեր օրգանիզմների (կորիզավոր և նախակորիզավոր բջիջների կառուցվածքները) 						
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Համագործակցային աշխատանքին միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում						
Նպատակների հասնելու ռազմավարություն	Նախատեսում է խմբային աշխատանք՝ արձանագրել թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դիսամիկան						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրում		Կիրառվող մեթոդ(ներ)		
5 րոպե	1. Բացել դասագրքերը, կրկնել դասը, ներկայացնել տնային աշխատանքները:	1. ա) Ողջունել դասարանին, բ) Կատարել հաճախումների ստուգում գ) Ստուգել տնային աշխատանքները, դ) Պատասխանել նախորդ դասի անհասկանալի հարցերին	Անրադարձ • Ի՞նչ հասկացանք: • Ի՞նչ սովորեցինք: • Ի՞նչը կարևորեցինք:		1. Մտազրոհ մեթոդներ 2. Գործնական աշխատանք 3. Համագործակցային մեթոդներ		
		2. Խթանիչ հարցի օգնությամբ պարզում					

		<p>Ենթ աշակերտների գիտելիքները թեմայի վերաբերյալ: Ի՞նչ գիտեք կորիզավոր և նախակորիզավոր բջիջների մասին:</p> <p>3.Յարգի պատասխանների քննարկումից հետո, նախապես բաժանված խմբերին տրվում է կոնկրետ հանձնարարություն:</p> <p>4ա) Խումբ I. Կորիզավոր բջիջի առանձնահատկությունները բ) Խումբ II. Նախակորիզավոր բջիջների առանձնահատկությունները:</p> <p>5. Խմբերի աշխատանքների վերլուծում</p>		
5 րոպե	2. Լսում են ուսուցչին պատասխանում հնչեցված հարցերին, կատարում հրահանգները:			
15 րոպե	3. Խմբերում աշակերտները սկսեցին աշխատել նախապես կատարված հանձնարարությունները			
10 րոպե	4. Ավարտեցին աշխատանքը համագործակցելով միմյանց հետ քննարկեցին առաջադրանքը և ներկայացրեցին աշխատանքները			

5 թույն	5.Հավաքում են աշխատանքները և հանձնում			
Տնային աշխատանք 3ր	Տնային առաջադրանքի հանձնարարում: Կազմել Վենսի դիագրամը			

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <<Անտարես>>, 2004.
2. Морозов А. В. Эвристические методы решения творческих задач.
<http://www.i-u.ru/>
3. Յու. Ա. Ամիրջանյան «Ժամանակակից դիդակտիկա»
4. Ղուլումջյան Գ. Ե. «Մանկավարժություն»
5. Բաբանսկի «Մանկավարժություն» 2-րդ հատոր
6. Պ. Կ. Սվաճյան <<Կենսաբանության ուսուցման մեթոդիկա>>